ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱԲԱՆ ԳԻՏՆԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ Ռոման Ահարոնյանի, Թամարա Բաղդասարյանի, Էմին Բեգլարյանի, Արսեն Հարությունյանի, Վարազդատ Հարությունյանի, Ցոլակ Մարգարյանի, Լիլիթ Ղազանչյանի, Դավիթ Մելքոնյանի, Դավիթ Վարդիկյանի և Պավել Գյուլումյանի,

հաշվի առնելով ««Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 05.10.2022թ. (ՀՕ-366-Ն) օրենքով (այսուհետ՝ Օրենք) կատարված փոփոխությունները,

նկատի ունենալով այն հանգամանքը, որ Օրենքի ուժով առաջացել է ՀՀ փաստաբանական ակադեմիայի կառավարման խորհրդի իրավաբան գիտնական անդամների **(այսուհետ՝ նաև Կառավարման խորհուրդ)** իրավաբան-գիտնական անդամների մրցույթ հայտարարելու անհրաժեշտություն,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 45.4-րդ հոդվածի 5-րդ մասի, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի **(այսուհետ՝ ՀՀ փաստաբանական ակադեմիա)** կանոնադրության 125-րդ կետի պահանջներով

միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Հայտարարել ՀՀ փաստաբանական ակադեմիայի կառավարման խորհրդի իրավաբան գիտնական անդամների մրցույթ:

2. Հաստատել ՀՀ փաստաբանական ակադեմիայի կառավարման խորհրդի իրավաբան գիտնական անդամների մրցույթի ծանուցման ձևը՝ համաձայն հավելվածի:

3. Դիմումների ներկայացման վերջնաժամկետն է՝ սույն որոշման հրապարակման հաջորդ օրվանից հաշված տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Սիմոն Բաբայան

13 մարտի 2026թ.
թիվ 6/13-Լ
ք. Երևան